



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԸ  
ՓԱՐԻՋԻ ՀԱՅՈՑ ԱՂՔԱՏԱԽՆԱՄ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՅՈԹԱՆԱՍՈՒՆՀԻՆԳԱՄՅԱԿԻ ԱՌԹՎ

ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ, ՅԱՐԳԱՐԺԱՆ ԲԱՐԵՍԷՐ ԵՒ  
ԱՍՏՈՒԱԾԱՊԱՇՏ ԱՆԴԱՄՈՑ ՓԱՐԻՋԻ ՀԱՅ ԱՂՔԱՏԱԽՆԱՄ  
ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՀԱՅ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ  
ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ  
ԷՋՄԻԱԾՆԻ Ի ԳԱՀԷ ՍՐԲՈՑ ՀՕՐՆ ՄԵՐՈՑ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐԶԻ  
ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ ՈՂՋՈ՞ՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ  
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Հայ սփիւռքի տարածքի վրայ մեր ազգի համար պատուաբեր տեղ մը կը գրաւէ Ֆրանսայի մայրաքաղաքի Աղքատախնամ ընկերակցութիւնը, որ իր գործունէութեան եօթանասունհինգ տարին բոլորեց այս տարի:

Փարիզ հիմնուած սոյն կազմակերպութիւնը, հայ քրիստոնէական գութի և մարդասիրական ազնիւ զգացումներու մէկ վճիտ արտայայտութիւնն է, որով կրնան հպարտ ըլլալ Ֆրանսահայութիւնը և մանաւանդ ընկերակցութեան հիմնադիրներն ու անոր արդի վարչութեան յարգարժան անդամները, գլխաւորութեամբ բարեսիրտ և ժրաջան նախագահ Տիար դոկտ. Վահրամ Չիլինգիրեանի:

Բազում տարիներէ ի վեր այն ընկերակցութիւնը բարիք և մխիթարութիւն կը տարածէ իր շուրջ, իր մշտական խնամքի տակ ունենալով՝ Ժընևի Նանսենեան գրասենեակի օժանդակութեամբ հիմնուած Ֆրանսայի երեք հայ ծերանոցները՝ Մոնտորենսիի, Անտիի և Սէն Ռաֆայէլի, ուր շուրջ երեք հարիւր հայ տարեցներ կը խնամուին լաւագոյն պայմաններու մէջ, նիւթական մեծահոգի աջակցութեամբը ֆրանսական պետական իշխանութիւններուն և հայ համայնքներու անդամներուն:

Բարեսիրական այս կազմակերպութիւնը և իր բազմամեայ վաստակը արժանի են յիշատակութեան և բոլորիս արդար գնահատանքին:

Որով, ընդառաջելով Արևմտեան Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ Գերաշնորհ Տ. Սերովքէ Արքեպիսկոպոսի միջնորդութեան, այն Մեր Կոնդակով Կ'ողջունենք Եօթանասուն և հինգամեայ հոբելեանը Փարիզի Աղքատախնամ ընկերակցութեան և Կ'օրհնենք անոր օգտաշատ գործունէութիւնը: Ամենայն Հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն Մեր օրհնութիւնը կը յենք ընկերակցութեան վարչութեան անձնուէր նախագահին ու անդամներուն, ինչպէս և բոլոր ազնուասիրտ նուիրատուներուն, ջերմագին աղօթքով որ Աստուած զանոնք բոլորը պահէ պահպանէ արևշատ երկար տարիներ իր պահապան հովանիին ներքև:

«Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն» (Մատթ. Ե. 8):  
Ամէն:

*Կալօթե Պ.*

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա Կոնդակս ի 18-ն հոկտեմբերի  
1966 Փրկչական ամի,  
և ի տումարիս Հայոց ՌՆԺԵ,  
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:  
ՀՄԻ. 600

